

Սեպտ. 10ին, թիմական ժողով մը կը գումարուի, որ պաշտօնական կ'ընէ Աղթամարի Պետրոս Կաթողիկոսը և անոր տեղ կ'ընտրէ իսապետուր Եպիսկոպոսը. — Իգմիրլիան, Հայրապետութիւն Հայ. Ուր. Ս. Եկեղեցւոյ, 1881, էջ 1007:

Ժ. — Ելիսե վարդապետ, 1896ի Ջարգերուն ընթացքին կը սպաննուի Գաւառի բռնապետ քուրտ Գուլիսան Բէկի մարդոց կողմէ և Վանքը կը թաւառուի:

Ժ. — Յովնանեան վրդ. Յակոբեան, 1901. — Ընդարձակ Օրացոյց, 1901, էջ 411:

ԱՊԱՐԱՆԻՑ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

Ապարանից Ս. Խաչ Վանքը կը գտնուէր Մոկաց սելթարչի Կարաւային կողմը, Մամրտանք գաւառի Ողկի և Ապարանք գիւղերուն մօտ: Հին եկեղեցին կը կոչուէր Ս. Կարապետ: Վանքը պատմութեան հորիզոնին վրայ նշանաւոր կը դառնայ Ժ. Գաւառուի. — Հմտ. Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ, էջ 821-838:

Ապարանից Վանքի առաջնորդներէն և գրական մշակներէն սակաւաթիւն ածուցներ միայն ծանօթ են մեզի. կը ներկայացնենք ստորեւ ժամանակագրական կարգով և ամփոփ զիժերով:

Դուրիք Եպս. Մոկաց, ձեռնադրուած Անանիա Մոկացի Կաթողիկոսէն (541-965), կը հիմնէ Ապարանից Վանքը, կը համբաւուի սրբապետ Կեանքով, խոր ձերութեամբ կը ինքէ իր մահախաղովն և կը թաղուի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ:

Սեփանոս Եպս. Մոկացի, եղբոր թոռ և յաջորդ Դուրիք Եպիսկոպոսի, կը շինէ նախ Ս. Ստեփանոս Նախավայրի եկեղեցին, և ապա Ս. Աստուածածնին հոյակապ տաճարը (983), նմանութեամբ Աղթամարի Ս. Խաչին: Կոստանդնուպոլսէն նուէր ստացած էր թանկագին խաչ մը, Կենայ Փայտի մասունքով, որուն ի պատիւ գրած պիտի ըլլայ «Սրբութիւն Սրբոց» սկզբնաւորութեամբ և Ստեփանոս ծայրանունով գեղեցիկ շարականը: Այդ առթիւ է որ Գրիգոր Նարե-

կացին ալ բանաստեղծական ոճով գրած է Ապարանից Խաչին պատմութիւնը և Ս. Խաչի ներքոյը, անոնց կցելով Ս. Կոյսին հաշուապ ներքոյը. — Հրատ. Մատենադարան, Վիեննայ, 1840, էջ 371-423, գրութիւնք, Կենեանք, 1840, էջ 371-423:

Վարդան Արեւիկապետ 1554 թուին կը յիշուի, իբրև առաջնորդ, Իգմարիս Սեփակոյ կողմէ, որ քսուրք գրքը մը կ'օրինակէ անդ. — Ոսկեան, Գ., էջ 829:

Տէր Խումայ Տորմալայ Արեւիկապետ, 1580-84. — Ս. Լաւայան, Յուլիան Զեռ, Վասպուրականի, էջ 691, թ. 289:

Իր առաջնորդութեան շրջանին Կիրակոս Կրօնաւոր օրինակած է Երկու Աւետարաններ, մին 1580ին. Խաչատուր Կրօնաւոր համար. (Ս. Լաւայան, Յուլիան, էջ 691), իսկ միւրը 1584ին. — Ոսկեան, Գ., էջ 831:

Սյո ժամանակ Ապարանից Ս. Խաչին միաբաններէն էր Սիմէոն Վրդ. Ապարանցի (1550-1615). ծանօթ տաղասաց, որ տաղաշարած է Ապարանից Ս. Նշանին պատմութիւնը, 1590ին. — Հրատ. Վաղարշապատ, էջ 129-141:

Սիմէոն Եպս. Ապարանցի (փոքր), 1611-63, որչի Կարապետի և Մովսէսի, աշակերտ Կալոյինց Կարապետ Վարդապետի (+ 1637), Սա կը հանդիսանայ շինարար առաջնորդ մը. հետեւեալ կը շինէ կամարակապ պանդոկ մը յաւառտաց համար (1651), նոյնպէս կամարակապ սղարի մը (1660), և Ապարանից գիւղի եկեղեցին (1664). — Աղաւաղներ, Միաբանք, էջ 472-3: Ոսկեան, Գ., էջ 827:

Քանի մը տարի ետքը, 1673ին, Վարդան Սեդէ, որչի քաղքարաւոր Անտիոսի, կ'օրինակէ Անտարան մը. — Լաւայան, Յուլիան, էջ 944:

Դար մը ետքը, 1762 թուին, կը պատահի հրաշալի երեւոյթ մը: Ըստ յիշատակագիր Յովհաննէս զըլի, սերեւեցաւ հրաշք սքանչելի Ապարանից Սուրբ Խաչի Վանքը, որ Նոր Կիրակին լոյսն յայտնապէս իլաւ ի վերայ սուրբ Խաչին մինչև Համարաբուս, գիշեր և ցերեկ կայր ի վերայ սուրբ Ոսկին. — Ոսկեան, Գ., էջ 837:

Ն. ԵՊՍ. ԵՈՒԼԿԱՆ